«ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱԴԱՊՏԱՑԻԱ» ՀԱՍԿԱՑՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

ՍԱՐԳԻՍ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

Սոցիալական ադապտացիայի երևույթներն ու պրոցեսները մարդկության պատմության մեջ շատ հին ծագում ունեն, սակայն սոցիալական համակարգերի ադապտիվ բնույթը երկար ժամանակ հատուկ գիտական ուսումնասիրության չի ենթարկվել և առայժմ սոցիալական իրականության քիչ հետազոտված բնագավառներից մեկն է։ Հասարակագիտության մեջ գոյություն ունեցող այս էական բացը լրացնելու համար այսօր անհրաժեշտ է սոցիալական ադապտացիայի երևույթները հետազոտության ենթարկել ամբողջ ճակատով, սկզբունքորեն բոլոր, ինչպես կոնկրետ, այնպես էլ «հիմնարար հասարակական գիտությունների կողմից»[1]։ Սոցիալական ադապտացիայի պրոբլեմներին նվիրված խորը և համակողմանի ուսումնասիրությունների համար կարևոր «նշանակություն են ձեռք բերում նաև ադապտացիայի հասկացությանը նվիրված հետազոտությունները, որպես իրիստ անհրաժեշտություններ սոցիալական գիտելիքի շրջանակներում»[2], առավել ևս, եթե ի նկատի ունենանք նաև այն հանգամանքը, որ առ այսօր «համարյա չկան աշխատություններ՝ նվիրված ընդհանուր գիտական (ավելի ճիշտ, միջգիտական) հասկացությունների ուսումնասիրությանը, որոնք օգտագործվում են հումանիտար գիտություններում և, դեռ ավելին, ձգվում են դեպի պատմական մատերիալիզմի կատեգորիաները»[3], որոնցից մեկն էլ, մեր համոզմամբ «ադապտացիա» հասկացությունն է։

Ինչպես հասարակագիտության, այնպես էլ, մասնավորապես, ընդհանուր սոցիոլոգիական տեսության մեջ ադապտացիայի հասկացության օգտագործման հարցի ուսումնասիրումը ներկայացնում է որոշակի տեսական հետաքրքրություն, «արձանագրելով, որ այս կամ այն հասկացությունը կիրառվում է ոչ թե մեկ, այլ մի ամբողջ շարք գիտություններում։ Պետք է ճշգրտել՝ որչափ է այն օրգանապես ընդգրկվում տեսության մեջ,՝ այսինքն՝ անհրաժեշտ և բավարա՞ր է նրա կառուցման և տրամաբանական ծավալման համար, թե՞ դա պարզապես տերմինաբանական ավելորդություն է, տուրք մոդային»[4]։ Բացի դրանից, ինչպես մատնանշեց ՍՄԿԿ Կենտկոմի հունիսյան (1983 թ.) պլենումը, «գիտության օրենքների ու կատեգորիաների շուրջը տեղի ունեցող բանավեճերը, իրենց ամբողջ նշանակությամբ հանդերձ, ինքնաբավ, սխոլաստիկ բնույթ չպետք է կրեն»[5]։ Անհրաժեշտ է կոնկրետ գիտական նյութի վրա ցույց տալ, թե իմացության իրական պրոցեսում ինչպիսի՞ հարցերի և պրոբլեմների ուսումնասիրության համար են

---

[1] Н. В. Илларионова, Н. С. Илларионов, А. Д. Урсул, Понятие «адаптация» и экологическая проблема («Известия АН Молд. ССР. Серия общественных наук», 1983, № 3, с. 43).

[2] *Նույն տեղում։*

[3] Д. А. Гущин, В. П. Огороднжков, А. М. Поджарова, В. В. Папанов, Соотношение категорий материалистической диалектики и общенаучных понятий («Философские науки», 1981, № 1, с. 165).

[4] В. А. Штофф, О статусе общенаучных понятий («Общенаучные понятия и материалистическая диалектика», Л., 1982, с. 26).

[5] *«ՍՄԿԿ Կենտրոնական կոմիտեի պլենումի նյութերը 14—15 հունիսի 1983 թ.», Երևան, 1983, էջ 38—39։*

կիրառվում այդ տրամաբանական «գործիքները», և հետևապես, ի՞նչն է նրանց պրակտիկ նշանակությունը, քանի որ այս կամ այն հասարակագիտական կատեգորիայի փիլիսոփայական ուսումնասիրությունը պետք է ծառայեցվի համապատասխան հասարակական երևույթի կամ պրոցեսի ճանաչման և կառավարման գործին։

Աղապտացիայի հասկացությունը լայն տարածում ունի նաև արդի բուրժուական սոցիալական գիտության մեջ։ Վերջին ժամանակներս շատ է խոսվում կապիտալիզմի, բուրժուական գաղափարախոսության ու պրոպագանդայի և կրոնի հարմարվելու մասին։ Ի դեպ, տարբեր կրոնական համակարգեր իրենց հետադիմական գործունեության մեջ վաղուց են օգտվում աղապտացիայի հասկացությունից ու մեթոդից։ Հասկանալի է, որ այս պայմաններում «սոցիալական աղապտացիա» հասկացության մարքսիստական մշակումը, և մասնավորապես, ընդհանուր սոցիոլոգիական տեսության մեջ նրա օգտագործման հարցի քննությունը որոշակի հետաքրքրություն կներկայացնի նաև արդի գաղափարական պայքարի խնդիրների լուծման տեսանկյունից։

Պատմության մատերիալիստական ըմբռնման տեսության հիմնադիրների մոտ կարելի է հանդիպել մի շարք հետաքրքիր ասույթների ու գաղափարների, որոնք վերաբերում են մարդկանց սոցիալական աղապտացիայի տարբեր դրսևորումների բնութագրությանը և կարող են ընդհանուր մեթոդաբանական հիմք ծառայել սոցիալական աղապտացիայի պրոբլեմների և հասկացության գիտական մշակման համար։ Արդեն «Բանվոր դասակարգի դրությունը Անգլիայում» աշխատության մեջ Ֆ. Էնգելսը գրում է, որ «մարդը պետք է չհարմարվի հանգամանքներին, այլ ընդհակառակը, հանգամանքները հարմարեցնի իրեն, մարդուն»[6]։ Ավելի ուշ, «Բնության դիալեկտիկայում» ընդհանրացնելով իր բազմամյա ուսումնասիրությունների արդյունքները, նա եզրակացնում է. «Զարգացման թեորիան ցույց է տալիս, թե ինչպես, պարզ բջջից սկսած, յուրաքանչյուր առաջընթաց քայլ մինչև ամենաբարդ բույսը՝ մի կողմից, ու մինչև մարդը՝ մյուս կողմից կատարվում է ժառանգականության և հարմարողականության մշտական պայքարի միջոցով»[7]։

Կ. Մարքսի մոտ, «1857—59 թթ. տնտեսագիտական ձեռագրերում» կարելի է կարդալ. «Վիթխարի տարբերություն կա. արդյոք բարբարոսնե՞րն են, որ կարող են ամեն ինչին հարմարված լինել, թե քաղաքակիրթ մարդիկ իրենք են ամեն ինչին հարմարվում»[8] և որ «արտադրության պրոցեսում հասարակության անդամները բնության նյութերը հարմարեցնում են (ստեղծում են, վերափոխում են) մարդկային պահանջմունքներին»[9]։ Կ. Մարքսի այս մտքերը իրենց հետագա զարգացումն ու ձևակերպումը ստացան «Կապիտալում», աշխատանքի պրոցեսի հայտնի մարքսյան սահմանման մեջ։ «Աշխատանքը,—գրում է Կ. Մարքսը,—նախ և առաջ մարդու ու բնության միջև կատարվող պրոցես է, մի պրոցես, որի մեջ մարդն իր սեփական գործունեությամբ միջնորդավորում, կարգավորում և վերահսկողության է ենթարկում նյութերի փոխանակությունը բնության և իր միջև»[10]։ Այնուհետև ավելացնում է. «Աշխատանքի պրոցեսի արդյունքը սպառողական արժեք է, բնության նյութ, որը ձևի փոփոխության միջոցով հարմարեցված է մարդկային պահանջմունքներին»[11]։ Այս աշխատության մեջ, անտիկ մտածողների տնտեսագիտական հայացքների վերլուծության առիթով Կ. Մարքսը

---

6 Կ. Маркс и Ф. Энгельс, Соч., т. 2, с. 443.

7 Ֆ. Էնգելս, Բնության դիալեկտիկա, Երևան, 1969, էջ 212։

8 К. Маркс и Ф. Энгельс, Соч., т. 46, ч. 1, с. 42.

9 К. Маркс и Ф. Энгельс, Соч., т. 46, ч. 1, с. 25.

10 Կ. Մարքս, Կապիտալ, հ. 1, Երևան, 1954, էջ 188։

11 Կ. Մարքս, Կապիտալ, հ. 1, էջ 192։

ծանոթագրություններում ընթերցողի ուշադրությունը հրավիրում է այն հանգամանքի վրա, որ Պլատոնի գլխավոր դրույթն այն է, «թե աշխատողը պետք է հարմարվի գործին, և ոչ թե գործը աշխատողին, բայց վերջինն անխուսափելի է, երբ աշխատողը միաժամանակ մի քանի զբաղմունքներով է պարապում, այսինքն՝ նրանցից մեկը կատարում է որպես կողմնակի զբաղմունք»[12]։

Մարքսյան այս գաղափարները, հատկապես աշխատանքի պրոցեսի վերոհիշյալ սահմանումը, ծառայում են իբրև կարևոր տեսական միջոց սոցիալական ադապտացիայի բազմաթիվ «գաղտնիքների» բացահայտման համար։ Ինչպես արդարացիորեն նշվում է փիլիսոփայական գրականության մեջ, «աշխատանքի մարքսյան ըմբռնումը, որն արտահայտում է մարդկային գործունեությանը հատուկ ակտիվության, նրա հսկայական վերափոխիչ կարողության աղբյուրը, այսօր հնարավորություն է տալիս սոցիոլոգորեն ճիշտ իմաստավորել... նրա կողմից իրականացվող ակտիվության ադապտիվ բնույթի գաղափարը»[13]։

Մարդու ադապտացիայի պրոբլեմների փիլիսոփայական մշակման համար առանձնապես կարևոր է արտացոլման լենինյան տեսության գաղափարների դերը։ Վ. Ի. Լենինը արտացոլման և հարմարման երևույթների անմիջական կապի վերաբերյալ գրում է. «Մարդը չէր կարողանա կենսաբանորեն հարմարվել միջավայրին, եթե նրա զգայությունները չտային նրան այդ միջավայրի մասին օբյեկտիվորեն ճիշտ պատկերացում»[14]։ Անդրադառնալով մարդկության բարձրագույն նպատակի բնութագրությանը, նա նշում է. «Մարդկության ամենաբարձրագույն խնդիրն է՝ ընդհանուր և հիմնական գծերով ընդգրկել տնտեսական էվոլյուցիայի (հասարակական կեցության էվոլյուցիայի) այդ օբյեկտիվ տրամաբանությունը, որպեսզի ըստ հնարավորին ավելի որոշակի, պարզ ու քննադատաբար հարմարեցնի դրան իր հասարակական գիտակցությունն ու բոլոր կապիտալիստական երկրների առաջավոր դասակարգերի գիտակցությունը»[15]։

Հեղափոխական դարաշրջանի հրատապ խնդիրների, պրոլետարիատի քաղաքական պայքարի հաջողության հեռանկարների կոնտեքստում Վ. Ի. Լենինը մեծ ուշադրություն առանձնացրեց նաև հարմարվողականության, իբրև առանձնահատուկ սոցիալական երևույթի, էության պարզաբանմանը, բանվորական կուսակցության շարքերում հարմարվողականների դեմ պայքարի կազմակերպմանը։ «Մարքսիզմ և ռևիզիոնիզմ» աշխատության մեջ նա բոլշևիկների ուշադրությունը հրավիրում էր այն հանգամանքի վրա, որ ռևիզիոնիզմը «հարմարվում է մարքսիզմին»[16], անխնա քննադատության է ենթարկում ռևիզիոնիստներին սխալ և վնասակար քաղաքական կողմնորոշումների համար[17]։

Մարքսիստական փիլիսոփայության հիմնադիրների մոտ, սոցիալական հարմարման երևույթների ու պրոցեսների մասին վերոհիշյալ մեթոդաբանական դրույթների առկայության պայմաններում, սովետական սոցիալ-փիլիսոփայական գիտության մեջ երկար ժամանակ, համարյա մինչև 60-ական թվականների սկիզբը, հարմարման, ադապտացիայի հասկացությունը առանձին կիրառություն չուներ։ Հասարակագիտության մեջ այս հասկացության լայն օգտագործումը պայմանավորված է գիտական նոր օրինաչափություններով՝ կապված արդի գիտատեխնիկական հեղափոխության և մասնավորապես բնական, հասարակական և տեխնիկական գիտությունների ինտեգրացման և այդ հիմքի վրա ընդհանուր գիտական «ադապտացիա» հասկացության կազ-

---

12 Կ. Մարքս, Կապիտալ, հ. 1, էջ 386։

13 Э. С. Маркарян, Интегративные тенденции во взаимодействии общественных и естественных наук, Ереван, 1977, с. 67.

14 Վ. Ի. Լենին, Երկ, հ. 18, էջ 227։

15 Վ. Ի. Լենին, Երկ, հ. 18, էջ 427—428։

16 Վ. Ի. Լենին, Երկ, հ. 17, էջ 29։

17 Վ. Ի. Լենին, Երկ, հ. 17, էջ 28։

մավորման հետ։ Սոցիալական ադապտացիայի հասկացության լայն օգտագործումն ու մշակումը հատկապես աշխուժացավ 70-ական թվականների սկզբներից, այսինքն՝ այն ժամանակաշրջանից, որը սովետական սոցիոլոգիական գիտության պատմության մեջ նշանավորվեց նաև նրանով, որ «էականորեն համալրվեց պատմական մատերիալիզմի իբրև գիտության կատեգորիաների ու հասկացությունների զինանոցը»[18]։ Այս շրջանից էլ լայն կիրառություն ստացան այնպիսի հասկացություններ, ինչպես «կապիտալիզմի հարմարումը», «կրոնի հարմարումը» և այլն, որոնք գիտական շրջանառության մեջ դրվեցին ՍՄԿԿ և Միջազգային կոմունիստական շարժման փաստաթղթերի միջոցով։ Ակամայից հարց է ծագում. պատմական մատերիալիզմի ո՞ր հասկացություններին է հարում, հասկացությունների ո՞ր խմբի մեջ պետք է դասվի սոցիալական ադապտացիայի հասկացությունը։

Սովետական նշանավոր սոցիոլոգներ Վ. Կելլեն և Մ. Կովալզոնը առաջարկել են պատմական մատերիալիզմի հասկացությունների հետաքրքիր դասակարգում, որն այս դեպքում կարող է մեզ համար կողմնորոշող լինել «սոցիալական ադապտացիա» հասկացության նախնական տեղի որոշման իմաստով։ Նրանք գրում են. «Պատմական մատերիալիզմի կատեգորիաները լինելով հասարակության «ճեղքման» արդյունք, տեսական վերլուծության նպատակով արձանագրում են նրա այն կողմերն ու պահերը, որոնք թույլ են տալիս մատերիալիստորեն բացատրել նրա՝ իբրև ամբողջական օրգանիզմի, գործառնությունն ու զարգացումը։ Հասարակության ուսումնասիրության երկու ասպեկտներին համապատասխան՝ որպես բնապատմական պրոցեսի և մարդկանց գործունեության արդյունք, պատմական մատերիալիզմը մշակում է երկու շարք կատեգորիա։ Նախ՝ հասկացությունների համակարգ, որոնցում արձանագրվում են սոցիալական ամբողջի առանձին մասերը, սոցիալական համակարգի տարրերը, այսինքն՝ առանձին հասարակական երևույթները... Երկրորդ, հասկացությունների համակարգ, որոնցում հետազոտվում են մարդկանց պատմական գործունեությունը, օբյեկտիվ օրենքների իրացմանը ներառց հաղորդակից դարձնելու մեխանիզմները, օբյեկտիվ անհրաժեշտության և գիտակցական գործունեության փոխհարաբերությունը և այլն» (ընդգծումը մերն է—Ս. Հ.)[19]։

Սոցիոլոգները ձեռնարկելով ադապտացիայի հասկացության օգտագործումն ու մշակումը սոցիալական գիտություններում, ընդհանուր սոցիոլոգիական տեսության մեջ, այն առաջին հերթին օգտագործում են մարդկային գործունեության բովանդակության յուրահատկության նկարագրման համար։ Այլ կերպ ասած, տվյալ դեպքում սոցիոլոգները դրանից օգտվում են որպես նոր, օժանդակ գիտական հասկացությունից, որն արտացոլում է մարդկային գործունեության որոշակի կողմը։ Այսպես՝ Ն. Սվիրիդովը գրում է. «Սոցիալական ադապտացիան ուղեկցում է գործունեության բոլոր տեսակներին, բոլոր սոցիալական ընդհանրություններին և հանդես է գալիս որպես մարդու՝ կոլեկտիվի կամ ուրիշ սոցիալական խմբի մեջ ընդգրկվելու անհրաժեշտ պայման։ Այն ցանկացած սոցիալական համակարգի գործունեության պարտադիր ասպեկտ է»[20]։ Զարգացնելով նման մոտեցումները սոցիալական ադապտացիայի երևույթների նկատմամբ, սոցիոլոգները իրենց վերջին հետազոտություններում դրա մասին արտահայտվում են որպես մեծ հասարակության ունիվերսալ ֆունկցիաներից մեկի[21]։ Ըստ Վ. Կելլեի և Մ. Կո-

---

18 «Коммунист», 1979, № 15, с. 70.

19 В. Ж. Келле, М. Я. Ковальзон, Теория и история (проблемы теории исторического процесса), М., 1981, с. 237.

20 Н. А. Свиридов, Социальная адаптация личности в коллективе («Социологические исследования», 1980, № 3, с. 44).

21 Տե՛ս Н. Г. Магомедов, Методологический анализ научного объяснения в марксистской социологии, Томск, 1984, с. 183.

վալզոնի վերոհիշյալ դասակարգման հենց այս էվրիստիկական նշանակությամբ, այս ճանաչողական դերով էլ ապահովվում է ադապտացիայի հասկացության տեղը պատմական մատերիալիզմի հասկացությունների համակարգում (երկրորդ խումբ), և տրամաբանորեն արդարացվում է դրա ներմուծումն ու օգտագործումը ընդհանուր սոցիոլոգիական տեսության մեջ։

Սկսած 60-ական թվականների կեսերից «սոցիալական ադապտացիա» հասկացությունը աստիճանաբար մտնում է գիտական շրջանառության մեջ ու սկսում ավելի հաճախակի երևալ ընդհանուր սոցիոլոգիական պրոբլեմների քննությանը նվիրված աշխատություններում։ Սովետահայ փիլիսոփաներից սոցիալական ադապտացիայի հարցերով առաջիններից մեկը սկսեց զբաղվել Է. Մարգարյանը։ Նա հետևողականորեն մշակեց կոնցեպցիա, համաձայն որի «մարդու տարբերությունը ...միջավայրի նկատմամբ առանձնահատուկ ակտիվ-հարմարողական հարաբերության մեջ է, որի ֆունկցիան ըստ էության կոչված է կատարելու արտադրությունը»[22]։ Հետևաբար, ինչպես գտնում է Է. Մարգարյանը, «մարդկային հասարակությունը հարկ է վերագրել հարմարող-հարմարեցնող համակարգերի առանձնահատուկ դասին, որակապես տարբեր պարզապես հարմարող համակարգերից՝ ներկայացված կենսաբանական կյանքի տարբեր ձևերով»[23]։ Հետագայում նա առաջարկում է «մարդկային հասարակությունը վերագրել ունիվերսալ հարմարող-հարմարեցնող համակարգերի առանձնահատուկ դասին»[24]։ Այս իսկ պատճառով էլ «ադապտացիա» հասկացությունը կոչված է արտահայտելու ոչ միայն կենսաբանական օրինաչափություններ, այլ չափազանց ավելի լայն դասի համակարգերի օրինաչափություններ, որոնք միջավայրի հետ փոխազդեցության մեջ են մտնում հակադարձ կապի սկզբունքի հիման վրա և ընդունակ են ինքնաուղղման՝ ոչ միօրինակ, փոփոխվող պայմաններում»[25]։ Ավելացնենք նաև, որ ադապտացիայի հատկությունը նա սահմանում է իբրև «համակարգի ինքնապահպանման համար միջավայրի պայմանների հետ համապատասխանության գալու ընդունակություն»[26]։ Այս կոնցեպցիան պաշտպանեցին ու շարունակեցին զարգացնել բազմաթիվ սովետական հետազոտողներ*։ «Մարդկային քաղաքակրթությունը արտադրության իր տարբեր տեսակներով (նյութական և հոգևոր) ադապտացիայի որակապես նոր ձև է՝ համեմատած պարզ կենսաբանական ադապտացիայի հետ։ Կենսաբանական էվոլյուցիան որպես ադապտիոգենեզ իր յուրատեսակ շարունակությունն է գտնում անտրոպոգենեզի և սոցիոգենեզի մեջ, որոնք ադապտացիայի նոր ձևեր են միայն»[27],—գրում են Վ. Մարկովը և Լ. Ռաստրիգինը։

70-ական թվականների հետազոտություններում սովետական սոցիոլոգները շատ ջանքեր գործադրեցին մարդկանց կենսաբանական ու սոցիալական ադապտացիայի տարբերությունների պարզաբանման, վերջինիս որակական յուրահատկությունների վերհանման ուղղությամբ։ «Մարդ—գիտու-

---

22 Э. С. Маркарян, Методологические проблемы системного исследования общественной жизни (автореферат докт. дисс., М., 1967, с. 22).

23 Э. С. Маркарян, О генезисе человеческой деятельности и культуры, Ереван, 1973, с. 80—81.

24 Э. С. Маркарян, Интегративные тенденции..., с. 199.

25 Նույն տեղում, էջ 131։

26 Նույն տեղում, էջ 164։

* Տե՛ս «Философские проблемы теории адаптации», М., 1975, с. 233; Н. В. Илларионова, Н. С. Илларионов, А. Д. Урсул, նշվ. աշխ., էջ 35; И. Б. Новик, Цивилизация и человек (в кн.: И. Калайков, Цивилизация и адаптация, М., 1984, с. 9, 14); «Словарь прикладной социологии», Минок, 1984, с. 160.

27 В. А. Марков, Л. А. Растригин, Адаптивная природа познания («Адаптивные системы», вып. 4, Рига, 1974, с. 109).

թյուն—տեխնիկա» կոլեկտիվ մենագրության մեջ (սովետական և չեխոսլովակյան) կարելի է կարդալ. «Մարդը ոչ միայն հարմարվում է միջավայրին, նա ամենից առաջ այն հարմարեցնում է իրեն, ենթարկում իր նպատակներին։ Այդպիսի ներգործությունը բնության վրա, որը դուրս է գալիս պարզ ադապտացիայի շրջանակներից, մարդկային աշխարհը տարբերում է կենդանիների աշխարհից։ Դրա հետ էլ կապված է մարդկային հասարակության ծագումը։ Ներգործումը բնության վրա և «երկրորդ», «մարդայնացված» բնության ծագումը մարդկության պատմության սահմաններ են, քանի որ օրգանապես կապված են հասարակական հարաբերությունների զարգացման հետ... Սակայն «երկրորդ» բնությանը հարմարվելը բազմաթիվ տեսակետներից դուրս է գալիս ավելի դժվար, քան ադապտացիան՝ բնական միջավայրին, որի շրջանակներում զարգացել են հարմարվելիության նախնական մարդկային մեխանիզմները»[28]։

Հետազոտողների ճնշող մեծամասնության կարծիքով, իրականության զարգացման մարդու և հասարակության մակարդակներում ադապտիվությունը կրում է էական-որակական փոփոխություններ և արտահայտվում միանգամայն այլ եղանակներով ու միջոցներով։ «Կենսագործունեությունը մարդու մակարդակում չի որոշվում կենսաբանական ադապտացիայով, այն տեսքով, որով դա ընթանում է ուրիշ ավելի ցածր կենսաբանական համակարգերում։ Բացի այն, որ դա սոցիալապես վերափոխված տեսքով իր մեջ է ընդգրկում բոլոր ադապտացիոն պրոցեսները, որոնք իրականանում են բնական հիերարխիայի ավելի ցածր աստիճաններում, մարդու ադապտացիան բաղկացած է զուտ սոցիալական ադապտացիայի պրոցեսներից, այսինքն՝ մեկը մյուսին ու միջավայրին զանազան սոցիալական համակարգերի ադապտացիայից» (ընդգծումը մերն է—Ս. Հ.)[29]։

Սոցիալական ադապտացիայի էության վերաբերյալ իր հիմնական գծերով նման տեսակետ է զարգացվում նաև «Ադապտացիայի տեսության փիլիսոփայական պրոբլեմները» (Մ., 1975) կոլեկտիվ մենագրության մեջ։ Ըստ մշակված կոնցեպցիայի, մարդկանց սոցիալական ադապտացիայի առանձնահատկությունները հիմնականում հանգում են հետևյալին. «Նախ և առաջ, մարդու հարմարվելու պրոցեսը ընթանում է գիտակցության ակտիվ մասնակցության պայմաններում (թեև առանձին պահերը կարող են և չգիտակցվել)։ Երկրորդ, մարդու նկատմամբ միջավայրը, որտեղ իրականանում է ադապտացիան, ունի սկզբունքորեն այլ բնույթ. այն հաճախակի ներկայանում է որպես նրա աշխատանքային գործունեության արդյունք։ Երրորդ, մարդը ոչ թե պասիվ է ընկալում ադապտացիայի արդյունքները, այլ ի վիճակի է սիստեմատիկաբար և նպատակասլաց ձևով փոփոխել դրանք իր կեցության սոցիալական պայմաններին համապատասխան»[30]։

Սովետական փիլիսոփաներ Ն. Իլլարիոնովան, Ն. Իլլարիոնովը և Ա. Ուրսուլը (80-ական թթ.), ամփոփելով սոցիալական ադապտացիայի պրոբլեմների հետազոտությանը նվիրված ուսումնասիրությունների արդյունքները, գրում են, որ ընդհանրապես «շարժման սոցիալական ձևն ունի հարմարող-հարմարեցնող բնույթ և վերափոխման ֆունկցիայի առաջատար դերի պայմաններում նա ամենևին էլ չի ազատվում բնությանը հարմարվելու անհրաժեշտությունից»[31]։

---

28 «Человек—наука—техника (опыт марксистского анализа научно-технической революции)», М., 1973, с. 209—210.

29 Г. Д. Волков, Н. Б. Оконская, Адаптация и ее уровни («Философия пограничных проблем науки», Пермь, 1975, с. 137).

30 «Философские проблемы теории адаптации», с. 232.

31 Н. В. Илларионова, Н. С. Илларионов, А. Д. Урсул, նշվ. աշխ., էջ 43:

Ինչպես նշում էր Վ. Ի. Լենինը, «յուրաքանչյուր հասկացություն որոշ հարաբերության, որոշ կապի մեջ է գտնվում մյուս բոլոր հասկացությունների հետ»[32]։ Մենք կսահմանափակվենք միայն «ադապտացիա» և «գործունեություն» հասկացությունների կապի քննությամբ։ Վերջինս, ընդհանուր սոցիոլոգիական տեսության մեջ ունեցած իր մեթոդաբանական դերին համապատասխան, ադապտացիայի հասկացության նկատմամբ կատարում է բացատրող սկզբունքի որոշակի դեր, որի շնորհիվ մարդկանց սոցիալական ադապտացիայի երևույթները ևս «լուսավորվում» (Լ. Ս. Ռուբինշտեյն) ու բացատրվում են նրանց սոցիալական գործունեության օգնությամբ, որի մեջ և որի միջոցով էլ նրանք դրսևորվում են։ Հիշենք, որ մեթոդաբանական գրականության մեջ բացատրող սկզբունքների տակ ի նկատի են ունենում այն հասկացությունները, որոնց հետևում «գիտելիքի կառուցման պրոցեսում... կանգնած են ոչ թե ինչ-որ ուրիշ հասկացություններ..., այլ կարծես թե անմիջականորեն ինքը՝ իրականությունը։ Այստեղ... սահման է դրվում... մտքի առարկային»[33]։

Սովետական նշանավոր սոցիոլոգ Լ. Բուևան «հարմարում» և «գործունեություն» հասկացությունների կապը բացատրում է այսպես. «Փիլիսոփայական վերլուծությունը գործունեության դիալեկտիկական բնույթը հայտնաբերում է հարմարվելու ու վերափոխման օբյեկտիվ պրոցեսների, նրանց համապատասխանող կուտակված փորձի յուրացման և նորի ստեղծման սուբյեկտիվ ձևերի հակադրամիասնության մեջ»[34]։

Է. Մարգարյանը գրում է մարդկային գործունեության, աշխատանքի, միջավայրի վրա մարդկանց արտադրական ներգործության ադապտիվ ֆունկցիայի մասին։ Նրա կարծիքով մարդկային գործունեությունը ունի երկմիասնական բնույթ, այն «շարունակելով մնալ ադապտիվ, դառնում է ունիվերսալ վերափոխիչ գործունեություն»[35]։ Ավելին՝ «ադապտացիա» և «գործունեություն» հասկացությունները այնքան են կապված, որ «հարմարվել միջավայրին» հասկացությունից դուրս «գործունեություն» կատեգորիան անսահմանելի է, իսկ նրանով արտահայտվող ֆենոմենը չի ենթարկվում գիտական բացատրության»[36]։ Այս հասկացությունները այնքան են դիալեկտիկորեն փոխկապակցվում, որ կարող են անգամ փոխել իրենց տեղերը և դերերը։ Բացատրվող կատեգորիան նույնպես կարող է կատարել որոշակի բացատրող ֆունկցիա իրեն բացատրող հասկացության նկատմամբ։ Ըստ երևույթին, այստեղ գործ ունենք «հասկացությունների դիալեկտիկայի» երևույթի հետաքրքիր դրսևորումներից մեկի հետ։

Ա. Ժուչենկոն և Ա. Ուրսուլը հատուկ գիտական քննարկման են ենթարկում գյուղատնտեսական աշխատանքի ադապտիվ բնույթը։ Նրանք առաջինը գիտական շրջանառության մեջ դրեցին «գյուղատնտեսական արտադրության ադապտիվ համակարգ» հասկացությունը[37]։

Մի շարք հետազոտողներ ադապտացիայի հասկացությունը ուղղակիորեն կապում են մարդկային գործունեության կոնկրետ տեսակների՝ աշխատանքի, իմացության, շփման, արժութակողմնորոշող գործունեության հետ։

---

32 Վ. Ի. Լենին, Երկ, հ. 29, էջ 217։

33 Э. Г. Юдин, Системный подход и принцип деятельности. Методологические проблемы современной науки, М., 1978, с. 274.

34 Л. П. Буева, Проблема деятельности личности в марксистской и буржуазной социологии («Исторический материализм как теория социального познания и деятельности», М., 1972, с. 44—45).

35 Э. С. Маркарян, О научно-интегративном значении понятия «деятельность» («Понятие деятельности в философской науке», Томск, 1978, с. 16).

36 Э. С. Маркарян, О генезисе..., с. 16.

37 Տե՛ս А. А. Жученко, А. Д. Урсул, Стратегия адаптивной интенсификации сельскохозяйственного производства, Кишинев, 1983.

Ա. Մեհրաբյանի կարծիքով, կոլեկտիվ աշխատանքի ուղիով կատարվող ողջ վերափոխիչ գործունեությունը իրենից ներկայացնում է հարմարման բարձրագույն տիպ[38]։ Իսկ ըստ ժամանակակից անգլիացի գիտնական Է. Ստոունսի՝ «մեզ հայտնի բոլոր տեսակներից (կենսաբանական—Ս. Հ.) միայն մարդն է ընդունակ հարմարվելու հաղորդակցության միջոցով։ Անհատը յուրացնելով նոր հմտություններ ու գիտելիքներ, ոչ միայն ձեռք է բերում սեփական կենսափորձ, այլև մշակույթի մեջ ընդգրկված լինելու ուժով որոշակիորեն ազդում է ողջ տեսակի հարմարվածության վրա»[39]։

Մարքսիստական գիտության մեջ ադապտացիայի հասկացությունը կապում են նաև արտացոլման հասկացության հետ։ Այս մասին բուլղարացի փիլիսոփա Ի. Կալայկովը գրում է. «Արտացոլիչ գործունեությունը և նրա ձևերը հարմարման առանձնահատուկ գործիք են, որոնք անմիջականորեն սպասարկում են միջավայրի հետ օրգանիզմների փոխանակության պրոցեսները»[40]։ Այս հարցում Ի. Կալայկովից ավելի հեռու են գնում Ն. Իլլարիոնովը և Ն. Իլլարիոնովան։ Նրանք գրում են. «Ադապտացիան՝ որպես հարմարում, միջավայրի պայմանների արտացոլումն է։ Բանը նմանօրինակ ձևով է տեղի ունենում նաև սոցիալական համակարգերի հետ. արտացոլելով սոցիալական և բնական միջավայրի օբյեկտիվ պայմանները, հասարակությունը հարմարվում է նրան»[41]։ Իսկ Ի. Նարսկին պարզապես գրում է բարդ կազմակերպված սոցիալական համակարգերի արտացոլիչ-ադապտիվ հնարավորությունների մասին[42]։

Այս պայմաններում բնական է, որ այսօր մարքսիստական գրականության մեջ խոսվում է նաև իմացության ադապտիվ բնույթի մասին։ Վ. Մարկովի և Լ. Ռաստրիգինի մոտ կարելի է կարդալ. «Ճանաչողական գործունեությունը կրում է վառ կերպով արտահայտված ադապտիվ բնույթ... նախ և առաջ, ինքը ճանաչողության ֆենոմենը ծագում է որպես աշխարհում մարդու կողմնորոշվելու գործիք և այդ աշխարհում նրա հաստատվելու միջոց։ Երկրորդ, ճանաչողության պրոցեսը կողմնորոշված է դեպի իրականության ադեկվատ, մաքսիմալ կերպով ճշգրիտ վերարտադրումը։ «Կոմֆորտը», որին ձգտում է ադապտիվ համակարգը, այստեղ համապատասխանում է օբյեկտիվ ճշմարտությանը, որը կախված չէ մարդուց, իմացության սուբյեկտից, կամ համենայն դեպս՝ ծայրահեղորեն թույլ։ Ճշմարտության օբյեկտիվությունը ապահովում է մարդու աշխարհ «մտնելը», նպատակների նվաճումը։ Երրորդ, ճանաչողության պրոցեսը ակտիվ պրոցես է... նա ունի որոնման բնույթ։ Ճանաչող սուբյեկտը օգտագործում է ճանաչողության հատուկ մեթոդիկա, հատուկ սարքեր ու հարմարանքներ և այլն։ Ճանաչողության պրոցեսը օպտիմալացվում է այնպիսի չափանիշներով, ինչպես խնայողությունը, հուսալիությունը, ճանաչողության արդյունքների ինֆորմացիոն տարողությունը և այլն»[43]։ Այս հեղինակների կարծիքով, «պատմական պլանում իմացության զարգացումը հանդես է գալիս որպես յուրատեսակ ադապտիոգենեզ, որքանով ճանաչողության մեթոդները

---

38 Տե՛ս А. А. Меграбян, Личность и сознание, М., 1978, с. 4.

39 Э. Стоунс, Психопедагогика. Психологическая теория и практика обучения, М., 1984, с. 77.

40 И. Калайков, Проблема приспособления и теория отражения («Ленинская теория отражения в свете развития науки и практики», т. 2, София, 1981, с. 191).

41 Н. С. Илларионов, Н. В. Илларионова, Понятие «адаптация» в эволюционной теории и социальной экологии («Методологические проблемы эволюционной теории», Тарту, 1984, с. 83).

42 И. С. Нарский, О механизмах обусловленности социальной коммуникации и познания (предисловие) (в кн.: В. А. Колеватов, Социальная память и познание, М., 1984, с. 4).

43 В. А. Марков, Л. А. Растригин, նշվ. աշխ., էջ 109—110։

ավելի նրբանում (ձևականացված ապարատի զարգացումը, գիտափորձի տեխնիկայի կատարելագործումը և այլն), իսկ մեր գիտելիքները էլ ավելի ադեկվատ են դառնում օբյեկտիվ աշխարհի նկատմամբ։ Այստեղ իմացության ադապտիվությունը ներկայանում է որպես հետազոտության մեթոդներ ստեղծելու ընդունակություն (ադեկվատ դրված նպատակի համար) և ընդհակառակը նպատակներ, որոնք կարելի է նվաճել ունեցած միջոցների՝ մեթոդիկաների, գործիքների և այլնի օգնությամբ»[44]։ Ադապտիվությունը բնորոշ է նաև մարդկանց արժութակողմնորոշող գործունեությանը, որքանով արժութային գիտակցությունն իր էությամբ, իր նախասկզբնական ծագմամբ կոչված է «լինելու վարքի կարգավորիչ»[45]։

Ընդհանուր սոցիոլոգիական տեսության մեջ ադապտացիայի հասկացության օգտագործման հարցի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ գիտական գիտելիքների «էկոլոգիականացման» արդի պայմաններում «ադապտացիա» հասկացությունը առաջին հերթին օգտագործվում է հասարակության և բնության փոխհարաբերության սոցիալ-փիլիսոփայական պրոբլեմների մշակման ժամանակ, «էկոլոգիական գիտելիքի սոցիալական մեկնաբանության»[46] դեպքում։ Այսպես օրինակ, Ա. Գուդոժնիկը, հասարակության և բնության փոխհարաբերության պրոբլեմը ուսումնասիրելով Կառավարման ընդհանուր տեսության սկզբունքների և աշխատանքի կատեգորիայի օգնությամբ, գրում է, որ արդի «էկոլոգիական ստրատեգիան կարող է հիմնվել միայն բարձրագույն կառավարող ադապտացիայի սկզբունքի վրա»[47], որը նրա մեկնության համաձայն համապատասխանում է աշխատանքի վերահսկող ֆունկցիային։

Է. Մարգարյանը ևս այս հասկացությունը առաջին հերթին օգտագործում է սոցիալ-էկոլոգիական պրոբլեմների մշակման համար։ Սոցիալական ադապտացիայի պրոբլեմների քննության ժամանակ նա առանձնացնում է երկու ասպեկտ՝ «էքստերիոր» (արտաքին) և «ինտերիոր» (ներքին) համապատասխանաբար ադապտացիայի հասկացության մեջ գնելով երկու նշանակություն։ Սրանցից առաջինը ունի սոցիալ-էկոլոգիական իմաստ[48]։ Է. Մարգարյանի կարծիքով, ընդհանրապես «ադապտացիա» հասկացությունը «հիմնարար նշանակություն ունի ինչպես կենսահամակարգերի էկոլոգիայի, այնպես էլ մարդկային հասարակության էկոլոգիայի համար»[49]։

Ն. Իլլարիոնովան, Ն. Իլլարիոնովը և Ա. Ուրսուլը նույնպես ադապտացիայի հասկացության բովանդակության մեջ, նրա սոցիալական ասպեկտում, առանձնացնում են երկու իմաստ, անվանելով նրանց սոցիալ-օնտոգենետիկական և սոցիալ-ֆիլոգենետիկական։ Վերջինիս բովանդակությունը, նրանց կարծիքով, կազմում է «մարդկության սեռային ադապտիվ հատկությունների ձևավորումը բնության հետ նրա փոխազդեցության պրոցեսում»[50]։

Ն. Իլլարիոնովի և Ն. Իլլարիոնովայի կարծիքով, արտադրության, գիտության, դաստիարակության և ուսուցման համակարգերի, հասարակական գիտակցության տարբեր ձևերի «էկոլոգիականացման» բուռն պրոցե-

---

44 Նույն տեղում, էջ 111։

45 М. С. Каган, Опыт системного анализа человеческой деятельности («Философские науки», 1970, № 5, с. 48).

46 О. Н. Яницкий, Методологические вопросы исследования социально-экологических проблем («Вопросы философии», 1982, № 3, с. 92).

47 Г. С. Гудожник, Научно-техническая революция и экологический кризис, М., 1975, с. 71.

48 Տե՛ս Э. С. Маркарян, Интегративные тенденции..., с. 168.

49 Э. С. Маркарян, Глобально-экологическое моделирование и интеграция наук, Пущино, 1980, с. 3.

50 Н. В. Илларионова, Н. С. Илларионов, А. Д. Урсул, նշվ. աշխ., էջ 36։

սը պետք է դիտել որպես մարդկանց սոցիալ-մշակութային ադապտացիայի կարևոր դրսևորումներից մեկը։ Նրանք գրում են. «Հասարակությունը իր ֆորմացիոն զարգացման բարձրագույն փուլում ի վիճակի է գիտականորեն գնահատել շրջապատող միջավայրում առաջացող փոփոխությունները և համապատասխանաբար մշակել դրանց հարմարվելու սոցիալական, մշակութային ձևեր։ Ըստ երևույթին երկար ժամանակ, իբրև հասարակության ադապտացիայի առաջատար ձև կմնա մարդկանց արտադրական գործունեության ձևափոխումը, նրա էկոլոգիականացումը, տիեզերականացումը։ Սոցիալական և մշակութային ադապտացիայի կարևոր ուղղություն պետք է համարել մարդկանց էկոլոգիապես նպատակահարմար վարքն ապահովող հասարակական ինստիտուտների ու արժեքների ձևավորումը»[51]։

Ընդհանուր սոցիոլոգիական տեսության մեջ ադապտացիայի հասկացությունը օգտագործվում է նաև հարմարման երևույթի այն դրսևորումների նշանակման և ուսումնասիրման համար, որոնք տեղ են գտնում հասարակության ներսում, այսինքն, երբ ի նկատի են ունենում առանձին անձանց, սոցիալական խմբերի կամ դասակարգերի, տարբեր կարգի սոցիալական ընդհանրությունների որոշակի հասարակության կամ պետության տնտեսական պայմաններին, իրավաքաղաքական համակարգին, բարոյահոգերանական մթնոլորտին և այլնին ադապտացիայի ենթարկվելու պրոցեսները։ Այս դեպքում, ինչպես նշվում է հետազոտողների կողմից, ադապտացիայի պրոցեսները հիմնվում են «մարդկանց միջև սոցիալական՝ սոցիալ-քաղաքական, բարոյահոգերանական, տնտեսական և դեմոգրաֆիական հարաբերությունների վերակառուցման վրա։ Հարմարման նման ելքը կարելի է անվանել «սոցիալական ադապտացիա», քանի որ տվյալ դեպքում մենք խոսում ենք սոցիալական միջավայրին հարմարվելու մասին»[52]։

Սովետական մեծ հանրագիտարանի վերջին, երրորդ հրատարակության մեջ մարդկանց ադապտացիայի այս տեսակի մասին գրված է. «Սոցիալական ադապտացիա, անհատական և խմբային վարքի համապատասխանեցումը տվյալ հասարակության, դասակարգի, սոցիալական խմբի մեջ իշխող նորմաների ու արժեքների համակարգին։ Իրականացվում է սոցիալականացման պրոցեսում, ինչպես նաև սոցիալական վերահսկման մեխանիզմների օգնությամբ, որոնք ընդգրկում են հասարակական և պետական հարկադրման միջոցները»[53]։

«Ադապտացիա» հասկացությունը այսպիսի, եթե կարելի է ասել, զուտ սոցիոլոգիական իմաստով է օգտագործում նաև Է. Մարգաբյանը (ադապտացիոն պրոցեսների հետազոտման «ինտերիոր» ասպեկտի դեպքում), երբ այն կիրառվում է անհատների փոխադարձ ադապտացիան կամ հասարակության մեջ մտնող զանազան խմբերի ադապտացիան նշանակելու համար[54]։

Ն. Իլլարիոնովան, Ն. Իլլարիոնովը և Ա. Ուրսուլը ադապտացիայի հասկացության այս իմաստը ի նկատի ունեն, երբ գրում են, որ ադապտացիայի հասկացությունը սոցիալական ասպեկտում ավելի հաճախ օգտագործվում է սոցիալ-օնտոգենետիկական նշանակությամբ։ Այս դեպքում, իբրև սոցիալական ադապտացիայի հիմնական մեխանիզմ, նրանք ևս նշում են սոցիալականացման պրոցեսը[55]։

Այնուհետև, ադապտացիայի հասկացությունը ընդհանուր սոցիոլոգիական տեսության մեջ կոնկրետացվում և կիրառվում է մարդկային անձնավորության, նրա ձևավորման ու զարգացման պրոցեսի նկատմամբ։ «Անձը, ինչպես և մշա-

---

51 Նույն տեղում, էջ 84։

52 «Философские проблемы теории адаптации», с. 232.

53 «Большая советская энциклопедия», т. 24, кн. 1, М., 1976, с. 242.

54 Տե՛ս Э. С. Маркарян, Интегративные тенденции..., с. 168.

55 Տե՛ս Н. В. Илларионова, Н. С. Илларионов, А. Д. Урсул, նշվ. աշխ., էջ 36։

կությունը, համակարգ է, որն իր զարգացման ողջ ընթացքում հարմարվում է իր ներքին և արտաքին միջավայրին և միաժամանակ ավելի կամ պակաս չափով նպատակասլաց և ակտիվ փոփոխում է նրան, հարմարեցնելով իր գիտակցված պահանջմունքներին»[56]։

Լ. Բուևայի կարծիքով, «անձի ձևավորման ընդհանուր պրոցեսում, նրա՝ կոնկրետ սոցիալական միջավայր մտնելու ժամանակ գործում են... երկու միտում՝ յուրացում և անձի որոշակի հարմարում՝ գոյություն ունեցող հասարակական պայմաններին, նմուշներին ու նորմերին, ինչպես նաև անձնական մասնակցությունը հասարակության զարգացման պահանջներին համապատասխան սրանց փոփոխելու մեջ»[57]։ Այս դեպքում ընդհանուր սոցիոլոգիական տեսության մեջ սովորաբար օգտագործվում է «անձի ադապտացիա» հասկացությունը։ Իսկ վերջինս էլ հաճախակի կապում են սոցիալականացման հասկացության հետ։ Այսպես՝ Մ. Կճանյանի կարծիքով «անձի սոցիալականացումը նրա լինելիության և զարգացման անընդհատ պրոցեսն է և այդ անընդհատության մեջ նշանակալից դեր է խաղում նրա սոցիալական ադապտացիան, որը հանդես է գալիս որպես սոցիալականացման անհրաժեշտ մեխանիզմ, որն էլ իր հերթին սոցիալական ադապտիվ պրոցեսի նախադրյալ է։ Սոցիալական ադապտացիան ներկայանում է իբրև սոցիալականացման՝ յուրատեսակ ձև»[58]։

Պատմական մատերիալիզմի տեսության ու ադապտացիայի հասկացության փոխհարաբերության հարցի քննարկումը ցույց տվեց, որ վերջին երկու տասնամյակների ընթացքում այս հասկացությունը իրոք թափանցել և լայն կիրառություն է ստացել ընդհանուր սոցիոլոգիական տեսության մեջ։ Այս երևույթը միանգամայն բնական է երևում, երբ այն դիտում ենք լայն տեսական հեռանկարում։ Այն է, «հասարակագիտությունը հանդիսանում է ամբողջությամբ վերցրած գիտության մի մասը, և հետևապես, պետք է զարգանա գիտական գիտելիքի զարգացման ընդհանուր մակարդակին համապատասխան։ Այս պլանում առանձնահատուկ նշանակություն է ձեռք բերում սոցիալական գիտելիքի ճյուղերի կողմից՝ ընդհանուր գիտական հասկացությունների ու մեթոդների օգտագործումը, որոնց դերը վերջին ժամանակներս աճում է»[59]։ Ինչպես փորձեցինք ցույց տալ, ադապտացիայի հասկացությունը, կոնկրետ դեպքում «սոցիալական ադապտացիա» հասկացությունը, պարունակում է լայն ճանաչողական հնարավորություններ սոցիալական հարմարման ֆենոմենի ամենաբազմազան դրսևորումների գիտական ուսումնասիրության և կառավարման համար։

К ВОПРОСУ О ПОНЯТИИ «СОЦИАЛЬНАЯ АДАПТАЦИЯ»

САРКИС АИРАПЕТЯН

Резюме

В системе понятий и категорий исторического материализма понятие «социальная адаптация» наиболее тесно связано с категорией «социальная деятельность».

---

56 И. С. Кон, В поисках себя: личность и ее самосознание, М., 1984, с. 168.

57 Л. П. Буева, նշվ. աշխ., էջ 48։

58 М. Г. Кджанян, Проблемы социальной адаптации личности (автореферат канд. дисс., Ереван, 1982, с. 15).

59 В. Я. Фетисов, Научный коммунизм как социологическая теория, Л., 1983, с. 48—49.

В общесоциологической теории можно выделить, по крайней мере, три применения, три значения понятия адаптации.

Во-первых, понятие адаптации в общесоциологической теории используется при разработке социально-философских проблем взаимоотношений общества и природы, когда под ней подразумевается приспособление общества, социального целого к внешним, природным (естественным) условиям. В этом случае используются понятия «экологическая адаптация», «социально-экологическая адаптация».

Во-вторых, понятие адаптации в общесоциологической теории используется в социологическом смысле, при изучении и объяснении тех проявлений феномена приспособления, которые имеют место в обществе, внутри социального целого, т. е. когда имеются в виду процессы адаптации социальных групп или классов, различного рода социальных общностей к экономическим отношениям, политико-правовой системе, морально-психологической атмосфере определенного общества или адаптация различных государств, общественных систем друг к другу. В этом случае используется понятие «социальная адаптация».

В-третьих, в общесоциологической теории понятие адаптации конкретизируется и применяется к характеристике человеческой личности, к процессу его формирования и развития. В этом случае оно выступает как понятие «адаптация личности».